ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 65

ՅՈՒՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Յուրիկ Պետրոսյանի դիմումը ՝ **որոշում եմ**

1. Յուրիկ Պետրոսյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն:

2. Հանձնարարել Յուրիկ Պետրոսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ

20 18թ.մայիսի 14
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 66

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ-ի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի 1, 2, 7 կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Պետրոսյանի դիմումը ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և դրա գործառնական նշանակությունը փոփոխելու վերաբերյալ, նաև անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունը կառուցվել է ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Զեֆիկ, Աշոտ, Վարազդատ Պետրոսյաններին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի 3-րդ փողոց թիվ 15 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինություններն ըստ «Գիս-Արտ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2018թ. հաստատված Շինությունների հատակագծի թիվ 7 շինության N 5 համարակալումով հատվածը՝բաց պատշգամբը և թիվ 8 շինությունը բնակելի տուն 48.5քմ ընդհանուր մակերեսով համարել օրինական:

2. Զեֆիկ, Աշոտ, Վարազդատ Պետրոսյաններին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի 3-րդ փողոց թիվ 15 հասցեում գտնվող՝ ըստ սեփականության վկայականի թիվ 5 համարակալումով շինության գոմի հատվածների գործառնական նշանակությունը փոխել համաձայն «Գիս-Արտ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2018թ. հաստատված Շինությունների հատակագծի՝ այն է. թիվ 5 համարակալումով հատվածը՝ ավտոտնակի և թիվ 7 համարակալումովը՝ բնակելի տան:

2. Սահմանել,որ հողամասի սեփականտերը
1) Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության

կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 126100 /մեկ հարյուր քսանվեց հազար հարյուր / ՀՀ դրամ օրինականացման վճարը:
2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 18 թ.մայիսի 14
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 67

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 05-Ի ԹԻՎ 64 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Չեղյալ ճանաչել Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 05-ի «Անշարժ գույքը միավորելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 64 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2018 թ. մայիսի16
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,Հեռ.060517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 68

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վարդան Ժորայի Գեղամյանի և Ալիսա Սմբաթի Առաքելյանի դիմումները և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականները՝ **որոշում եմ**

1. Վարդան Ժորայի Գեղամյանին և Ալիսա Սմբաթի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող՝ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Երևան- Սևան մայրուղի 2/1-2/1-3 հասցեում գտնվող 07-062-0105-0040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0.0069 հա հողամասը և ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Երևան-Սևան մայրուղի թիվ 2/1-4 հասցեում գտնվող 07-062-0105-0042 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0.0116 հա հողամասը միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, Երևան-Սևան մայրուղի 2/1:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 18թ.մայիսի16
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 69

ԶԵՅԹՈՒՆ ՕՍՈՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը,ինչպես նաև քաղ. Զեյթուն Օսոյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Զեյթուն Օսոյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողմասում առևտրի սրահի կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Զեյթուն Օսոյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ.մայիսի 17
գ.Վերին Պտղնի